Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոց, թիվ 80 հասցեի հարակից անտառային տարածքում Վանաձոր համայնքին պատկանող հողամասը, առանց հողօգտագործման իրավունքի և առանց շինարարության թույլտվության, կառուցվել է փայտե հավաքովի կոնստրուկցիաներով տնակ, որով ծանրաբեռնված հողամասը փաստացի օգտագործվել է ապօրինի, քանի որ այդ հողամասի նկատմամբ չկա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպված որևէ իրավունք, ուստի անհրաժեշտություն է առաջացել ազատել հիշյալ հողամասը՝ դրանով ծանրաբեռնված ինքնակամ շինարարությունից:

3. Վարչական ակտ ընդունելու հիմնավորումը.

«Հայաստանի Հանրապետության քաղաքական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կառուցված և ինքնակամ կառույցների հաշվառման կարգ սահմանող Կառավարության որոշմամբ սահմանված կարգով հաշվառված ինքնակամ կառույցների վրա տարածվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը գործող ինքնակամ կառույցների օրինականացմանը վերաբերող կարգավորումները, այդ թվում՝ դրանց հիման վրա ընդունված ենթաօրենսդրական ակտերի դրույթները:

Համաձայն քաղաքական օրենսգրքի 188-րդ հոդվածի 1-ին մասի՝ ինքնակամ կառույց է համարվում օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով այդ նպատակի համար չհատկացված հողամասում կամ առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված կամ վերակառուցված կամ տեղադրված շենքեր, շինություններ կամ այլ կառույցներ, իսկ իսկ 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ ինքնակամ կառույցը չի կարող ճանաչվել օրինական և ենթակա է քանդման (ապամոնտաժման): Նման կառույցի քանդման (ապամոնտաժման) կարգը և ժամկետները սահմանվում

են Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը, այդ թվում՝ ինքնական կառույցի առկայությամբ հողամասը ձեռք բերողը, կրում է դրա վրա գտնվող ինքնական կառույցի օգտագործման ու ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) հետ կապված ռիսկերը: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ Հողամասի սեփականատերն իրավունք ունի քանդելու իր հողամասում գտնվող ինքնական կառույցը՝ առանց դատարան դիմելու: Պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում գտնվող ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում կայացնում են օրենքով սահմանված իրավասու մարմինները: Ուրիշի հողամասում գտնվող ինքնական կառույցը պետության, համայնքի կամ այլ շահագրգիռ անձի հայցով, որի իրավունքները և օրենքով պահպանվող շահերը խախտվել են, ենթակա է քանդման (ապամոնտաժման), իսկ հողամասը՝ նախկին վիճակի վերականգնման՝ հողամասի սեփականատիրոջ հաշվին: Ուրիշի հողամասում ինքնական կառույց իրականացրած անձը պարտավոր է հատուցել հողամասի սեփականատիրոջը հասցրած վնասը, ներառյալ՝ ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) և հողամասի նախկին վիճակի վերականգնման ծախսերը: Վերը նշված հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ինքնական կառույցների առկայությամբ անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման առանձնահատկությունները կարգավորվում են գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին օրենքով և դրա հիման վրա ընդունված այլ իրավական ակտերով: Ինքնական կառույցները չեն կարող ճանաչվել օրինական, և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման 2-րդ կետով սահմանված է, որ օրինականացման ենթակա չեն այն ինքնական կառույցները՝

ա. որոնց պահպանումը խախտում է այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ է սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը:

բ. որոնք կառուցված են հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված են քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և առաջացնում են հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք: Նույն որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետով սահմանված է, որ սույն կարգով նախատեսված ինքնական կառույցների օրինականացումը մերժվում է համապատասխան որոշմամբ, եթե դրանք չեն բավարարում քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով և սույն կարգով սահմանված օրինականացման պայմանները:

Համաձայն ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման հավելվածի 33-րդ հոդվածի՝ համայնքի ղեկավարը սեփական նախաձեռնությամբ ընդունում է որոշում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերում գտնվող ինքնական կառույցներն օրինականացնելու կամ քանդելու մասին:

Համաձայն հողային օրենսգրքի 44-րդ հոդվածի, քաղաքացիների ու իրավաբանական անձանց հողամասերի նկատմամբ սեփականության և այլ գույքային իրավունքներն իրենց հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք է՝ օրենքով նախատեսված սահմանափակումների ու այլ պայմանների պահպանմամբ և հողամասերի նկատմամբ քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքը ծագում է պետական ու համայնքային հողերի մասնավորեցման, ժառանգման, առքուվաճառքի, նվիրատվության և հողի հետ կապված այլ գործարքների ու իրավաբանական փաստերի հիման վրա:

Համաձայն «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի՝ համայնքների տարածքներում համայնքի ղեկավարը վերահսկում է կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքների, բնակավայրերի քաղաքաշինական կանոնադրության պահանջների կատարումը, հողերի և ամրակալված գույքի քաղաքաշինական նպատակային օգտագործումը, ինչպես նաև կանխարգելում, կասեցնում է ինքնական շինարարության դեպքերը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը:

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի՝ համայնքի ղեկավարը կանխարգելում ու կասեցնում է ինքնական շինարարությունը և օրենքով սահմանված կարգով ապահովում է դրանց հետևանքների վերացումը, ընդունում է համայնքային սեփականություն հանդիսացող հողամասում ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշում և իր լիազորությունների շրջանակներում օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովում է ինքնական կառույցի քանդման (ապամոնտաժման) մասին որոշման կատարումը:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ եթե վարչական վարույթ հարուցելուց հետո վարչական մարմնի տրամադրության տակ առկա են համապատասխան վարչական ակտն ընդունելու համար անհրաժեշտ փաստաթղթերը, բավարար չափով պարզաբանված և ճշգրտված են տվյալ գործի հանգամանքները, ապա վարչական մարմինը պարտավոր է վարչական ակտն ընդունել նշված հանգամանքների ի հայտ գալուց հետո՝ ողջամիտ ժամկետում՝ չսպասելով ընդհանուր կամ հատուկ ժամկետի լրանալուն:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 38-րդ հոդվածի 3-րդ մասի «ա» կետի՝ լսումներ չեն անցկացվում, եթե անհրաժեշտություն է առաջանում անհապաղ ընդունելու վարչական ակտ, քանի որ հապաղումը կարող է հանգեցնել հանրության համար որևէ վտանգի առաջացման:

Համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի՝ գրավոր վարչական ակտն ուժի մեջ է մտնում այդ ակտի ընդունման մասին՝ նույն օրենքի 59-րդ հոդվածով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, եթե օրենքով կամ այդ ակտով այլ բան նախատեսված չէ:

Հաշվի առնելով վերը նշված փաստական ու իրավական հիմնավորումները և հարուցված վարչական վարույթի ընթացքում ձեռք բերված ապացույցները, հիմք ընդունելով հողային օրենսգրքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 44-րդ հոդվածի 2-րդ մասի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 26-րդ հոդվածի 6-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի, 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, 42-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 30-րդ, 36-րդ, 38-րդ, 58-րդ և 60-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՀ կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի հ.912-Ն որոշման պահանջները՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Զօրինականացնել Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոց, թիվ 80 հասցեի հարակից անտառային տարածքում կառուցված փայտե հավաքովի կոնստրուկցիաներով տնակը:

2. Հանձնարարել Վանաձորի համայնքապետարանի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի և իրավապահ մարմինների օժանդակությամբ ապամոնտաժել Վանաձոր համայնքի Մյասնիկյան փողոց, թիվ 80 հասցեի հարակից անտառային տարածքում կառուցված փայտե հավաքովի կոնստրուկցիաներով տնակը:

3. Առաջարկել ՀՀ ոստիկանությանը Վանաձորի համայնքապետարանի կողմից վարչական հարկադրանքի միջոցներ կիրառելու ընթացքում, համապատասխան վայրում ապահովել հասարակական կարգի պահպանումը:

4. Վանաձորի համայնքապետի որոշմամբ նախատեսված ապամոնտաժման ու դրան զուգորդող այլ աշխատանքների իրականացման հետ կապված ծախսերը՝ դատական կարգով բռնագանձել ինքնակամ կառույցն իրականացրած անձից:

5. Սույն որոշման պահանջների կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետի վրա:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

7. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Վանաձորի համայնքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

8. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Վանաձորի համայնքապետարանի ղեկավարը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



2022թ. հոկտեմբերի 06
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

06 հոկտեմբերի 2022 թվականի N 589

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վանաձոր համայնքի տարածքում գտնվող չորացած, գերհասուն, սանիտարական նորմերին չհամապատասխանող, հատման ենթակա ծառերն ուսումնասիրելու նպատակով ստեղծված հանձնաժողովի կողմից 30.09.2022 թվականին կազմված արձանագրությունները, «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ի տնօրեն, հանձնաժողովի նախագահ Հայկ Համբարձումյանի 30.09.2022 թվականի թիվ 03Ա/16, 03Ա/17 և 03Ա/18 զեկուցագրերը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 51-րդ հոդվածով, «Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Տալ թույլտվություն Վանաձոր համայնքի Կնունյանց փողոցի թիվ 2/36 բնակարանի բնակիչ Ալլա Վելեգանի հարազատների գերեզմանի մոտ գտնվող 1/մեկ/ չորացած ծառի, Տիգրան Մեծի թիվ 63 շենքի դիմաց, մայթեզրին առկա 1 /մեկ/ չորացած ծառի և Երևանյան խճուղու թիվ 107 շենքի ուղղությամբ, կանգառին կից 2 /երկու/ չորացած ծառերի հատման համար:

2. «Նեցուկ ՀՁ» ՀՈԱԿ-ին իրականացնել վերոնշյալ ծառերի հատման աշխատանքները:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 590

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԱՔԵՂՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 50 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ,
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐՈՆ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐԿԱՐԱՅԱՆԻ,
ՆԵԼԼԻ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆԻ, ՆԱՐԻՆԵ ԱՐԱՐԱՏԻ ՆԵՐԿԱՐԱՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տարոն Արարատի Ներկարարյանի, Նելլի Արարատի Ներկարարյանի և Նարինե Արարատի Ներկարարյանի դիմումը, 15.06.1995թ. տրված անհատական բնակելի տան սեփականության վկայագիրը, 19.12.2019թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 8191 (նոտարական ակտի կոդ: 763-20191030-84-4276604) և թիվ 8192 (նոտարական ակտի կոդ: 763-20191030-84-4276201) վկայագրերը, ԱՐՍԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Աքեղյան փողոց թիվ 50 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 350.51քմ մակերեսով հողամասը և դրա վրա կառուցված բնակելի նշանակության շինությունը չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Հողամասի ընդհանուր մակերեսը կազմում է 350.51քմ, որից 41.70քմ մակերեսով հողամասը հանդիսանում է ընդհանուր օգտագործման հողամաս երկու տնատիրությունների: Տարոն Արարատի Ներկարարյանի, Նելլի Արարատի Ներկարարյանի և Նարինե Արարատի Ներկարարյանի բաժնեմասը կազմում է 329.66քմ (350.51-41.70 :2): Անհատական բնակելի տունը կառուցվել է 1960թ: Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 189-րդ և 190-րդ հոդվածներով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Տարոն Արարատի Ներկարարյանի (1/2), Նելլի Արարատի Ներկարարյանի (1/4) և Նարինե Արարատի Ներկարարյանի (1/4) բաժնային սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Աքեղյան փողոց թիվ 50 հասցեի բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 329.66քմ մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ:
2. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
3. Վանաձոր քաղաքի Աքեղյան փողոց թիվ 50 հասցեի բնակելի տան տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր, Վանաձոր ք., Մ.Աքեղյան փողոց թիվ 50/1 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱԵՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 591

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ Օ1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ
460 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Վազգեն Խորենի Հարությունյանի կողմից լիազորված անձ Արթուր Սարգսի Հալոբոյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի Օ1 Սեպտեմբերի 2022 թվականի թիվ 460 որոշումը, 20.04.2022 թ. տրված թիվ 26.657 լիազորագիրը, 10.05.2022 թ. թիվ 43 ապոստիլը, Արսեն Իսահակյան Ռուդիկի ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 23.09.2022 թվականի թիվ Կ-23092022-06-0053 որոշումը, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշումը ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

Վանաձոր համայնքի ղեկավարի Օ1 սեպտեմբերի 2022 թվականի ՀՀ Վանաձոր քաղաքի Ն. Ստեփանյան փողոց թիվ 9 հասցեի բնակելի տանը կից Հողամասի և դրա վրա գտնվող շինությունների նկատմամբ Վազգեն Խորենի Հարությունյանի Սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 460 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «21.47քմ» բառերը փոխարինել «19.83քմ» բառերով :
2. Որոշման նախաբանում և 2-րդ կետում՝ <<211.47քմ>> բառերը փոխարինել <<209.83քմ>> բառերով:
3. Որոշման հատակագծերն փոխարինել նոր հատակագծերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 592

ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 14 ՀՈԿԼԻՍԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 223
ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սերգո Մնացականի Մանուկյանի (ծնված՝ 01.05.1962թ.) լիազորված անձ Վաղինակ Գալուստի Դավթյանի դիմումը, Վանաձոր համայնքի ղեկավարի 14 հուլիսի 2022 թվականի թիվ 223 որոշումը, 19.11.2021թ. տրված թիվ 64 ԱԱ 3526434 լիազորագրի թիվ 78 ուսերենից հայերեն թարգմանությունը (նոտարական ակտի կոդ: 763-20220112-64-5634681), ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագիծը, ՀՀ կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին 17.12.2021 թվականի թիվ Կ-09082022-06-0109 որոշումը, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշումը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ որոշում եմ.

Վանաձոր համայնքի ղեկավարի 07 դեկտեմբերի 2021 թվականի «Վանաձոր քաղաքի Հ. Հակոբյան փողոց թիվ 21 հասցեում գտնվող բնակելի տան և շինությունների նկատմամբ Սերգո Մնացականի Մանուկյանի սեփականության իրավունքը ճանաչելու և նոր փոստային հասցե տրամադրելու մասին» թիվ 223 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. Որոշման նախաբանում՝ ««ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի» բառերը փոխարինել «ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի» բառերով:
2. Որոշման նախաբանում և 1-ին կետում՝ «202.7քմ» բառերը փոխարինել «186.7քմ» բառերով:
3. Որոշման հատակագծերն փոխարինել նոր հատակագծերով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝

ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



2022թ. հոկտեմբերի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 593

**«Գ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Գ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Լալազարյանի 2022 թվականի սեպտեմբերի 30-ի թիվ 01/12113 հայտը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, 45-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետով և «Գովազդի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությամբ՝ **որոշում եմ**

1. Բավարարել Վանաձոր քաղաքի Տավրոս փող. թիվ 43 հասցեում գործող «Գ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ ԵՎ ԸՆԿԵՐՆԵՐ» ՍՊԸ-ի տնօրեն Գագիկ Լալազարյանի հայտը՝ ավագանու սահմանած դրույքաչափերին համապատասխան համայնքի վարչական տարածքում՝ Թումանյան փող. թիվ 8գ հասցեում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության և պայմանագիր կնքելու մասին:
2. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ եռօրյա ժամկետում հայտատուին տրամադրել համապատասխան թույլտվություն:
3. Համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ սահմանված կարգով հայտատուի հետ կնքել համապատասխան պայմանագիր:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 594

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԼԱՋՅԱՆ ՓՈՂՈՑ 45 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՏԱՐԱԾՔԻՆ
ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տիգրան Յուրիկի Նոյանի լիազորված անձ Սամվել Քոչարի Խառատյանի 22.09.2022 թվականի թիվ 11499 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 16092022-06-0019 վկայականը, 08.08.2022 թվականի թիվ 3845 լիազորագիր (նոտարական ակտի կոդ: 741-20220808-90-6155330), 22.09.2022 թվականի անշարժ գույքի նվիրատվության թիվ 4406 պայմանագիր (նոտարական ակտի կոդ: 741-20220921-4-6284308), անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

Վանաձոր քաղաքի Լազյան փողոց 45 հասցեում գտնվող տարածքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Ս. Լազյան փողոց, 45 շենք, 41 տարածք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 595

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԿՆՈՒՆՅԱՆՑ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՆԱՐԵԿ
ԽԱԶԻԿԻ ՍՈՒԼՅԱՆԻ, ԽԱԶԻԿ ԺՈՐԺԻ ՍՈՒԼՅԱՆԻ, ԱՐՄԵՆՈՒՀԻ ԷԴԻԿԻ
ՍՈՒԼՅԱՆԻ, ՀԱԿՈԲ ԽԱԶԱՐԻ ՍՈՒԼՅԱՆԻ, ՄԱՐԻՆԵ ԺՈՐԺԻ ՍՈՒԼՅԱՆԻ,
ԼՈՒՍԻՆԵ ՂԱԶԱՐԻ ՍՈՒԼՅԱՆԻ ԵՎ ԳԵՎՈՐԳ ԽԱԶԻԿԻ ՍՈՒԼՅԱՆԻ
ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍ ՕՏԱՐԵԼՈՒ ԵՎ
ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Նարեկ Խաչիկի Սուլյանի (ծնված՝ 31.10.1984թ.), Խաչիկ Ժորժի Սուլյանի (ծնված՝ 14.06.1958թ.), Արմենուիկ Էդիկի Սուլյանի (ծնված՝ 26.06.1972թ.), Հակոբ Ղազարի Սուլյանի (ծնված՝ 22.04.1991թ.), Մարինե Ժորժի Սուլյանի (ծնված՝ 10.09.1969թ.), Լուսինե Ղազարի Սուլյանի (ծնված՝ 06.03.1992թ.) և Գևորգ Խաչիկի Սուլյանի (ծնված՝ 04.06.1982թ.) դիմումը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, 29.01.2019թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 323 (նոտարական ակտի կոդ: 763-20190127-84-3453813), թիվ 325 (նոտարական ակտի կոդ: 763-20190127-84-3453821), թիվ 327 (նոտարական ակտի կոդ: 763-20190127-84-3453827) վկայագրերը, 14.02.2019թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 704 (նոտարական ակտի կոդ: 763-20190211-84-3506977), թիվ 705 (նոտարական ակտի կոդ: 763-20190211-84-3506427) վկայագրերը, 16.05.1997թ. սեփականության վկայագիրը, անշարժ գույքերի հասցե տրամադրելու մասին որոշման քաղվածքը «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 17.02.2020թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-31/20 Ի եզրակացությունը, «ԱՐՄԵՆ ԻՍԱՀԱԿՅԱՆ ՌՈՒԴԻԿԻ» ԱԶ-ի կողմից տրված տեղագրական հատակագիծը և հաշվի առնելով այն, որ Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 28 հասցեում կառուցված բնակելի տունը, շինությունները և դրանց զբաղեցրած ու սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ ու այն զբաղեցրած 162.0քմ մակերեսով հողամասերը, դրանց վրա կառուցված բնակելի նշանակության շինությունները չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի և ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ: Բնակելի տունը կառուցվել է 1955-2019թ.թ., բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ հողամասի մակերեսը փաստացի կազմում է 562.0քմ, որը զբաղեցվել և շահագործվում է 1955 թ.-ից սկսված:

Ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 9-րդ կետերով, 10.06.2008թ. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական

բնակելի տների կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ որոշում եմ.

1. Ճանաչել Նարեկ Խաչիկի Սուլյանի, Խաչիկ Ժորժի Սուլյանի, Արմենուհի Էդիկի Սուլյանի, Հակոբ Ղազարի Սուլյանի, Մարինե Ժորժի Սուլյանի, Լուսինե Ղազարի Սուլյանի և Գևորգ Խաչիկի Սուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 28 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար անհրաժեշտ 400.0քմ հողամասի նկատմամբ, իսկ սահմանված 400.0քմ մակերեսը գերազանցող 162.0քմ մակերեսով չկառուցապատված հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարել Նարեկ Խաչիկի Սուլյանին, Խաչիկ Ժորժի Սուլյանին, Արմենուհի Էդիկի Սուլյանին, Հակոբ Խազարի Սուլյանին, Մարինե Ժորժի Սուլյանին, Լուսինե Ղազարի Սուլյանին և Գևորգ Խաչիկի Սուլյանին՝ դրա կադաստրային արժեքով՝ 1107160 (մեկ միլիոն հարյուր յոթ հազար հարյուր վաթսուն) դրամով:

2. Ճանաչել Նարեկ Խաչիկի Սուլյանի, Խաչիկ Ժորժի Սուլյանի, Արմենուհի Էդիկի Սուլյանի, Հակոբ Ղազարի Սուլյանի, Մարինե Ժորժի Սուլյանի, Լուսինե Ղազարի Սուլյանի և Գևորգ Խաչիկի Սուլյանի սեփականության իրավունքը Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 28 հասցեում գտնվող 562.0քմ (400+162.0) մակերեսով հողամասի վրա գտնվող բնակելի նշանակության բոլոր շինությունների նկատմամբ՝ բացառությամբ 15.05.2001թ. հետո ինքնակամ կառուցված 55.93քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 45.37քմ) բնակելի տան 1-ին հարկի, 5.67քմ մակերեսով աստիճանների, 53.70քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 40.86քմ) բնակելի տան 2-րդ հարկի, 10.47քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 8.77քմ) բաց պատշգամբի, 2.69քմ մակերեսով հարթակի, 3.6քմ մակերեսով պարիսպների, 29.63քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 28.11քմ) կիսակառույցի:

3. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ Նարեկ Խաչիկի Սուլյանի, Խաչիկ Ժորժի Սուլյանի, Արմենուհի Էդիկի Սուլյանի, Հակոբ Ղազարի Սուլյանի, Մարինե Ժորժի Սուլյանի, Լուսինե Ղազարի Սուլյանի և Գևորգ Խաչիկի Սուլյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 162.0քմ մակերեսով հողամասի առավաճառքի պայմանագիր:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5. Վանաձոր քաղաքի Կնունյանց փողոց թիվ 28 հասցեում գտնվող գույքին տրամադրել փոստային հասցե՝ ք. Վանաձոր, Կնունյանց փողոց, թիվ 28/2 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝



ԱՐԿԱԴԻ ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.iori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 596

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՆԵՐՍԻՍՅԱՆ ԹԱՂԱՄԱՍ ԹԻՎ 1-3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արայիկ Սարգսյանի 08.09.2022 թվականի թիվ 10795 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 01122020-06-0029 վկայականը, Վանաձորի քաղաքային համայնքի ղեկավարի 29 նոյեմբերի 2012 թվականի թիվ 1361-Ա որոշումը, 24.12.2012թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 284 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Ներսիսյան թաղամաս թիվ 1-3 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2032 թվականի հոկտեմբերի 5-ը:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Արայիկ Սարգսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 19.8քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 18 (տասնութ) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Ներսիսյան թաղամաս, 1/3 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 597

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ Կ. ԴԵՄԻՐՃՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 8-46 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Էդուարդ Լևոնի Հովհաննիսյանի 03.10.2022 թվականի թիվ 12157 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 08112012-06-0196 վկայականը, Վանաձոր քաղաքային համայնքի 26.10.2012 թվականի թիվ 1162-Ա որոշումը, 05.11.2012թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 228 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Կ. Դեմիրճյան փողոց թիվ 8-46 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2032 թվականի հոկտեմբերի 26-ը:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Էդուարդ Լևոնի Հովհաննիսյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20,0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Կ. Դեմիրճյան փողոց, 8/46 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՄԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.ori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 598

**ՎԱՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 9Բ-28 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ԵՎ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ
ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Ռաֆիկ Ավետիսի Զադոյանի 22.09.2022 թվականի թիվ 11481 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 21112012-06-0343 վկայականը, 07.11.2012թ. համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին թիվ 232 պայմանագիրը, ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 28.03.2013թ. թիվ 276-Ն որոշմամբ, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Վանաձոր քաղաքի Թումանյան փողոց թիվ 9բ-28 հասցեում գտնվող հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգել մինչև 2032 թվականի հոկտեմբերի 29-ր:

2. Վանաձորի համայնքի ղեկավարին՝ Ռաֆիկ Ավետիսի Զադոյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել 20,0քմ մակերեսով հողամասի կառուցապատման իրավունքի տրամադրման պայմանագրի ժամկետը երկարաձգելու վերաբերյալ համապատասխան համաձայնագիր՝ 1.0քմ մակերեսով հողամասի համար վճարի չափը ամսական սահմանելով 24 (քսանչորս) դրամ, իսկ աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին հաշվառել վերոնշյալ պայմանագիրը:

3. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Հ. Թումանյան փողոց, 9/28 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք

Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040

vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 599

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՏԱՎՐՈՍ ԹԱՂԱՄԱՍ 20 ՓՈՂՈՑ 39 ԵՎ ՏԱՎՐՈՍ ԹԱՂ. 20 ՓՈՂ. ԹԻՎ 39Ա ՀԱՍՑԵՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՄԱՐԱՏ ՄԱՔՍԻՄԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԵՎ ՆՎԵՐ ՍԱՐԳՍԻ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԵՐԿՈՒ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐ ՏԱՐԱՆՋԱՏԵԼՈՒ, ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵՆԵՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մարատ Մաքսիմի Նավասարդյանի և Նվեր Սարգսի Նավասարդյանի խնամակալ Նարինե Ավայայի Պողոսյանի դիմումը, «Անգործունակ Նվեր Սարգսի Նավասարդյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին» Վանաձոր համայնքի ղեկավարի 16 օգոստոսի 2022 թվականի թիվ 367 որոշումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 24112017-06-0041 և անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման թիվ 1233752 վկայականները, 11.11.2021թ. տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի թիվ 6091(նոտարական ակտի կոդ: 763-20211109-84-5508594) վկայագիրը, ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված հողամասի հատակագծերը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 31-րդ հոդվածի 2-րդ կետով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ, 10-րդ, 11-րդ և 17-րդ կետերով, 18-րդ կետի ա) ենթակետով, ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Տարանջատել Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս 20 փողոց 39 և Տավրոս թաղ. 20 փող. թիվ 39ա հասցեներում գտնվող, Մարատ Մաքսիմի Նավասարդյանին և Նվեր Սարգսի Նավասարդյանին ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով պատկանող բնակելի տները և դրանցով զբաղեցված հողամասը՝ համաձայն ԳԱՍՊԱՐ ՎԵՔԻԼՅԱՆ ԱԶ-ի կողմից տրված թիվ 1 և թիվ 2 հատակագծերի:

2. Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս 20 փողոց 39 և Տավրոս թաղ. 20 փող. թիվ 39ա հասցեներում գտնվող տարանջատված գույքին տրամադրել փոստային հասցեներ. ա) Մարատ Մաքսիմի Նավասարդյանին պատկանող 0.0496 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 59.64 քմ շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամասի

20-րդ փողոց, 39 բնակելի տուն (հատակագիծ թիվ 1).

բ) Նվեր Սարգսի Նավասարդյանին պատկանող 0.0496 հա մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող 53.19 քմ շինությունների փոստային հասցեն՝ ք. Վանաձոր, Տավրոս թաղամասի 20-րդ փողոց, 39/2 բնակելի տուն (հատակագիծ թիվ 2):

3. 18.0 քմ մակերեսով հողամասը թողնել ընդհանուր օգտագործման տակ Տավրոս թաղամասի 20-րդ փողոց, թիվ 39 և թիվ 39/2 հասցեների միջև՝ հավասար բաժիններով:

4. Ճանաչել օրինական Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամասի 20-րդ փողոց, 39/2 հասցեում գտնվող, Նվեր Սարգսի Նավասարդյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնացող, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներից դուրս, առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումների իրականացված և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող ինքնակամ կառուցված ընդհանուր 23.5 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը 21.89 քմ) բնակելի նշանակության շինությունները:

5. Նվեր Սարգսի Նավասարդյանի կողմից օրինականացման համար սահմանված վճարը՝ ընդհանուր 23.5 քմ արտաքին մակերեսով բնակելի նշանակության շինությունների համար 46280 (քառասունվեց հազար երկու հարյուր ութսուն) դրամ գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում սույն որոշումը կհամարվի ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 600

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՓՈՂ ԹԻՎ 116Բ/13-Ի ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ
ՍՐՃԱՐԱՆԻՆ ՆՈՐ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Անի Հրանտի Թադևոսյանի 05.09.2022 թվականի 10560 դիմումը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 1881459 վկայականը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 4-րդ ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Վարդանանց փող թիվ 116բ/13-ի հասցեում գտնվող սրճարանին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Վարդանանց փողոց, 116/13 սննդի սպասարկման կետ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 07
ք.Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 601

ՎԱՆԱՁՈՐ ԳՅՈՒՂ ԳՈՒԳԱՐՔ, ՔՈՐԵՋԱՅԻՆ 10-ՐԴ ՓՈՂՈՑ ԹԻՎ 36 ՀԱՍՑԵՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ
ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ԴՐԱՆՈՎ ՋԲԱՂԵՑՎԱԾ ՈՒ ՍԿԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ՃԱՆԱԶԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՓՈՍԱՑՅՈՒՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Ռայա Վլադիմիրի Հովսեփյանի 10.06.2022թ. թիվ 02/5499 դիմումը, անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, հանրային ծառայություններ մատուցող կազմակերպությունների եզրակացությունները, «Վանաձորի նախագծող» ՍՊԸ-ի կողմից 15.07.2022թ. տրված շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ թիվ ՎՆ 1-56/22 Ի եզրակացությունը, «ԻՆԷՔՍ» ՍՊԸ-ի կողմից տրված հողամասի և շինությունների հատակագծերը, շինությունների բնութագիրը, ՀՀ կադաստրի կոմիտեի 10.06.2022թ. հաշվառման (չափագրման) տվյալների մուտագրման տեղեկանքը (չափագրման տվյալների մուտագրման ծածկագիր: 20224SZPU7), ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 8-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³-րդ հոդվածի 11, 12, 13, 14 մասերով ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 731-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 2006թ. մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 33-րդ կետով, ՀՀ կառավարության 2021թ. փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Ճանաչել Վանաձոր համայնքի սեփականության իրավունքը Վանաձոր գյուղ Գուգարք, Քորեջային 10-րդ փողոց թիվ 36 հասցեում ինքնակամ կառուցված, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված օրինականացման պայմաններին համապատասխանող ընդհանուր 208.9քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 181.0քմ) բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի թվին չդասվող 334.0քմ մակերեսով հողամասի նկատմամբ՝ համաձայն հատակագծի:
2. Փոխել 0.0334 հա հողամասի գործառնական նշանակությունը այլ հողերից՝ բնակելի կառուցապատման հողերի:
3. Ճանաչել օրինական սույն որոշման 1-ին կետում նշված բնակելի գործառնական նշանակությամբ ինքնակամ կառույցը:
4. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի եկամուտների հավաքագրման, գույքի կառավարման և գովազդի բաժնին՝ 5-օրյա ժամկետում դիմել ՀՀ կադաստրի կոմիտեի Լոռու մարզային ստորաբաժնում՝ սույն որոշման 1-ին կետում նշված ինքնակամ կառուցված բնակելի տան և դրանով զբաղեցված ու սպասարկման համար անհրաժեշտ հողամասի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում կատարելու համար:
5. Վանաձորի համայնքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության բաժնի պետ-գլխավոր ճարտարապետ Ս. Աբովյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված գույքի նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի գրանցումից հետո 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկել սույն որոշման 1-ին կետում նշված շինության ինքնակամ կառուցումը որակակազմում անձին բնակելի տունը և հողամասը ուղղակի վաճառքի ձևով օտարելու վերաբերյալ:
6. Սույն որոշման 1-ին կետում նշված գույքին տրամադրել նոր փոխադրման հասցե՝ Վանաձոր գյուղ Գուգարք, Քորեջային 10-րդ փողոց, 36 բնակելի տուն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՈՒՄ

Ա. ՓԵԼԵՇՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
Ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22, Ֆաքս 0322 22250, Հեռ. 060 650044, 060 650040
vanadzor.lori@mta.gov.am, info@vanadzor.am

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 հոկտեմբերի 2022 թվականի N 602

ՎԱՆԱԶՈՐ ՔԱՂԱՔԻ ԶԵՅԹՈՒՆԻ ՓՈՂՈՑ ԹԻՎ 3/6 ՀԱՍՑԵԻՆ ԿԻՑ ԳՏՆՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԻՆ ՆՈՐ ՓՈՍԱՑԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով անշարժ գույքերի հասցեներ տրամադրելու մասին որոշման քաղվածքը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 25-ի թիվ 233-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետով՝ **որոշում եմ**.

Վանաձոր քաղաքի Վանաձոր քաղաքի Զեյթունի փողոց թիվ 3/6 հասցեին կից գտնվող 0.05349 հա մակերեսով հողամասին տրամադրել նոր փոստային հասցե՝ Վանաձոր Վանաձոր ք., Զեյթունի փողոց, 3/8 հողամաս:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ



Ա. ՓԵԼԵՇՅԱՆ

2022թ. հոկտեմբերի 07
ք. Վանաձոր



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՆԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Վանաձոր համայնք
